Արարատ Հակոբյան
(կենսագրություն)

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՊՏՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ Արարատ Մխիթարի Հակոբյանը ծնվել է 1947 թ. փետրվարի 26-ին ՀՍԽՀ Էջմիածնի շրջանի Ապագա գյուղում՝ երկրագործի ընտանիքում: Նրա նախնիները պատմական Սասունից են: Այդ հանգամանքն էլ հավանաբար պայմանավորել է հետաքրքրությունը պատմական Հայրենիքի (Էրգրի) ու առհասարակ պատմագիտության նկատմամբ:

Ավարտելով 11-ամյա միջնակարգ դպրոցը՝ 1966–1971 թթ. ուսանել և բարձր առաջադիմությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո (ասպիրանտուրա ընդունվելու երաշխավորագրով) նույն 1971 թ. աշխատանքի է անցել ԳԱ պատմության ինստիտուտում: Մասնագիտանալով նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հարցերում՝ ուսումնասիրել է Արևելյան Հայաստանի ու, մասնավորապես, Կարսի մարզի պետական գյուղացիների պատմության հիմնախնդիրները: Ավարտելով ինստիտուտի արտադրությունից չկտրված ասպիրանտուրան՝ 1980 թ. հաջողությամբ պաշտպանել է ատենախոսական թեզ և ստացել պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան:

Ատենախոսության մեջ բացահայտել է ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում Կարսի մարզի պետական գյուղացիների սոցիալական, տնտեսական, հողային, հարկային, իրավական և այլ հարաբերությունները, դրանք համեմատել Անդրկովկասի և Ռուսաստանի նույնաբնույթ գյուղացիական կարգախմբերի հետ: Հետագայում լույս տեսավ հեղինակի նույնանուն մենագրությունը:

1982 թ. հունվարից Ա. Հակոբյանը դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (ներկայումս ՀՊՃՀ) սկզբում՝ ավագ դասախոսի, այնուհետև դոցենտի պաշտոնում:

Լայն և բազմակողմանի է հեղինակի հետաքրքրությունների շրջանակը: Նա զբաղվել է նաև խորհրդային հասարակության սոցիալական քաղաքականության ու սոցիալական կառուցվածքի հարցերով:

1988 թ. սկիզբ առած Արցախյան շարժման և Հայաստանի անկախացման գործընթացների հրամայականով Ա. Հակոբյանը հանրապետությունում առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ հայոց պատմության մինչ այդ արգելված (սև և սպիտակ) էջերի ուսումնասիրությանը: Ձերբազատվելով խորհրդային-կոմունիստական գաղափարախոսական կապանքներից ու կարծրատիպերից և օգտվելով գաղտնազերծված արխիվային ֆոնդերից՝ Ա. Հակոբյանը Հայաստանի Հանրապետությունում առաջիններից մեկը՝ 1992 թ., մի քանի հազար տպաքանակով լույս տեսցրեց «Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.)», իսկ 1994 թ. «ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովը» գիտական գրքույքները, ինչպես նաև բազմաթիվ այլ գիտական հոդվածներ, նաև տարատեսակ հրապարակումներ մամուլում:

ՀՀ գիտական պարբերականներում՝ «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր» հաս. գիտ., «Դրոշակ» և այլն, իրար հետևից լույս տեսան Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական և կուսակցական համակարգի պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1998 թ. հաջողությամբ պաշտպանեց «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.)» նոր ատենախոսական թեզ և ստացավ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Աշխատության մեջ հեղինակը բազմակողմանիորեն հիմնավորում է, որ 1-ին աշխարհամարտի և 1917 թ. ռուսական հեղափոխությունների ժամանակաշրջանների թոհուբոհում Մեծ եղեռն տեսած հայ ժողովուրդն իր մեջ ուժ գտավ դարավոր ընդմիջումից հետո վերականգնել անկախ պետականությունը և կայացնել Հայաստանի առաջին Հանրապետությունը: Ցույց է տրված, որ 1-ին հանրապետությունը բոլոր պարամետրերով՝ քաղաքական, պետաիրավական, ռազմադիվանագիտական և այլն, կազմակերպված պետություն էր, որը, սակայն, հիմնականում արտաքին ուժերի ճնշմամբ կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացվեց: Ա. Հակոբյանի սույն ուսումնասիրությունը՝ իբրև մենագրություն, լույս տեսավ 2005 թ.:

Վերջին տարիներին հեղինակը ձեռնամուխ եղավ և հրատարակության պատրաստեց Հայաստանի և հայ ժողովրդի պատմական ճակատագրում բախտորոշ երեք պայմանագրերի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի գիտական ու անաչառ լուսաբանմանը: Արդյունքում հրատարակվեց հույժ արդիական ու արժեքավոր մի մենագրություն, որը գալիս է ավելի հարստացնելու հայ պատմագիտական միտքը:

Ա. Հակոբյանը իր մասնակցությունն է բերել նաև «Հայոց պատմություն» բազմահատորյակի հեղինակային և խմբագրական աշխատանքներում: Նրա հեղինակությամբ է պատրաստված 4-րդ

հատորի Առաջին հանրապետությանը նվիրված բաժնի զգալի մասը: Նա համահեղինակ է նաև «Հայոց պատմության» օտար լեզուներով տարբերակի:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ՝ Ա. Հակոբյանը վարել է նաև բեղուն դասախոսական և ուսումնամեթոդական աշխատանքներ: 1990-ական թվականների կեսերից նրա հեղինակությամբ մի քանի հրատարակությամբ լույս են տեսել «Հայոց պատմություն» բուհական ուսումնական ձեռնարկը և ուսումնամեթոդական այլ աշխատանքներ:

2005 թվականից պրոֆեսոր Ա. Հակոբյանը գլխավորում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) պատմության և քաղաքագիտության ամբիոնի աշխատանքները:

Պրոֆեսոր Ա. Հակոբյանը համահեղինակ է ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի ընդհանուր խմբագրությամբ 2008 թ. լույս տեսած 8-րդ և 9-րդ դասարանների «Հայոց պատմության» դպրոցական դասագրքերի:

Ընդհանուր հաշվով, Ա. Հակոբյանը հեղինակ է ավելի քան 10-ը մենագրությունների, 70-ից ավելի գիտական հոդվածների ու գրքույքների, 100-ից ավելի քաղաքական, հրապարակախոսական և այլ բնույթի հրապարակումների: Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը ընդգրկված է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի մասնագիտական խորհրդի կազմում: Նա խորը բանիմացությամբ և երիտասարդական ավյունով շարունակում է աշխատանքները պատմագիտության ճակատում:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Թիվ	Աշխատանքի անվանումը	Բնույթը /տպ., ձեռ./	Հրատարակչութ.,ամսագիր, հեղինակային իրավունք /տարին, համարը/	Ծավալը /էջ/	Համա հեղի նակներ
1	2	3	4	5	6
1.	Կարսի մարզի ազգաբնակ-չությունը /1897-1914թթ./	տպագիր	Պատմա-բանասիրական հանդես, 1976, թիվ 4	էջ 147-154	
2.	Գյուղատնտեսության զար-գացումը Կարսի մարզում /19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ/	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱ, 1977, թիվ 8	էջ 42-48	
3.	Կարսի մարզի գյուղացիա-կան շարժումների պատ-մությունից /20-րդ դ. սկզբներին/	-	Բանբեր Երևանի համալսարանի, 1977, թիվ 2	էջ 236-240	
4.	Կարս թերթը /1883-1917թթ./, գիտական ինֆորմացիա	-	Պատմա-բանասիրական հանդես, 1977, թիվ 4	էջ 249-250	
5.	Կարսի մարզի գյուղա-տնտեսության մեջ կապի-տալիստական հարաբերութ-յունների զարգացման պատ-մությունից /19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ/	-	Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1978, թիվ 10	էջ 67-73	
6.	Կարսի մարզի գյուղացիութ-յան սոցիալական կազմը	-	Պատմա-բանասիրական հանդես, 1982, թիվ 4	էջ 94-104	

	/ըստ 1917թ. գյուղատնտեսական հաշվեհամարի նյութերի/				
7.	Ակունքների մոտ /«Աշխատանքի ազատագրություն» խմբի 100-ամյակի առթիվ/	-	Կուսակցական խոսք, 1983, թիվ 19	էջ 25-28	
8.	Գյուղական արհեստագործությունը Կարսի մարզում /19-րդ դ. վերջ- 20-րդ դ. սկիզբ/	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱ, 1985, թիվ 7	էջ 32-38	
9.	Կուսակցության ագրարային ծրագիրը 1905-1907թթ. հեղափոխության շրջանում		Լենինյան ուղիով, 1986, թիվ 12	էջ 54-60	
10.	Գյուղական համայնքը Կարսի մարզում /19-րդ դ. վերջ- 20-րդ դ. սկիզբ/	-	Պատմա-բանասիրական հանդես, 1987, թիվ 1	էջ 64-74	
11.	ՍՄԿԿ սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները արդի էտապում /մեթոդական ցուցումներ/	-	ԵրՊԻ պատմենահանման-բազմացման արտադրություն, Ե., 1987	20 էջ	
12.	Հանուն դեմոկրատիայի հետագա խորացման	-	Կուսակցական խոսք, 1988, թիվ 18	էջ 16-20	
13.	ԽՄԿԿ սոցիալական ստրատեգիան	-	«Հայաստան» հրատարակչություն, Ե., 1989	152 էջ	
14.	Սոցիալիզմի լենինյան կոնցեպցիան	-	Լենինյան ուղիով, 1990, թիվ 3	էջ 20-28	
15.	Հասարակության սոցիալական կառուցվածքի մի քանի հարցեր	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱ 1990, թիվ 4	էջ 23-34	

Թիվ	Աշխատանքի անվանումը	Բնույթը /տպ., ձեռ./	Հրատարակչութ.,ամսագիր, հեղինակային իրավունք /տարին, համարը/	Ծավալը /էջ/	Համա հեղի նակներ
16.	Հայաստանի Հանրապետություն /1918-1920թթ./	տպագիր	«Հայաստան» հրատարակչություն, Ե., 1992	35 էջ	
17.	Անկախության գաղափարը Հ. Յ. Դաշնակցության ծրագրերում /1890-1920թթ./	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ 1993, թիվ 3	էջ 18-26	
18.	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան /ՀՊՃՀ/	-	ՀՊՃՀ հրատարակչություն, Ե., 1993	էջ 24	Ա. Ս. Սարգսյան
19.	ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը	-	Մ. Վարանդյան հրատարակչություն, Ե., 1994	45 էջ	
20.	Արևելյան Հայաստանը 1916-1917թթ. մարդահամարներում /քննադատություն և մատենախոսություն/	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ, 1994, թիվ 1	էջ 164-166	
21.	Հայոց քաղաքական պատմություն /դասախոսությունների համառոտագիր/	-	ՀՊՃՀ հրատարակչություն, Ե., 1995	էջ 79-91	
22.	Հայոց համառոտ պատմություն	-	«Հայաստան» հրատ. Երևան, 1995	230 էջ	Ա. Ս. Սարգսյան Հ. Ե. Շահինյան
23.	Հայոց պատմություն	-	ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 1996	320	Ա. Ս. Սարգսյան
24.	Սպեցիֆիկներ /գաղափարախոսություն, ծրագիր, գործունեություն/ 1903-1918թթ.	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ, 1997, թիվ 2	էջ 34-47	
25.	Սպեցիֆիկները Հայաստանի Հանրապետությունում /1918-1920թթ./	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ 1997, թիվ 3	էջ 15-24	
26.	Հայաստանի անկախության ուղին /1917-1918թթ./	-	Նորք, 1998, թիվ 2	էջ 63-78	
27.	Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները /1918-1920թթ./	-	ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 1998	40 էջ	
28.	Միջկուսակցական պայքարը 1919թ.	-	«Դրոշակ», Երևան, 1998թ., թիվ 9	էջ 27-32	
29.	Հայաստանի խորհրդարանը /1919-1920թթ./	-	«Դրոշակ», Երևան, 1998, թիվ 10	էջ 25-30	
30.	Պաշտպանության և բանակի խնդիրները Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանում /1918-1920թթ./	-	«Հայկական բանակ», Երևան, 1998, թիվ 4	էջ 5-15	
31.	Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանը բանակի և Արցախի մասին	-	«Դրոշակ», Երևան, 1999, թիվ 10	էջ 20-29	
32.	Արցախյան խնդիրը Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանում /1918-1920թթ./	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ, 1999, թիվ1	էջ 93-97	
33.	Հայոց քաղաքական պատմություն /ուսումնամեթոդական ձեռնարկ/	-	ՀՊՃՀ հրատարակչություն, Ե., 1999	էջ 37-62	Ա. Ս. Սարգսյան Վ. Հ. Վիրաբյան
34.	Կարսի մարզ /գյուղացիության պատմության ուրվագծեր/ 1878-1917թթ.	-	ՀՊՃՀ հրատարակչություն, Ե., 2000	166	

Թիվ	Աշխատանքի անվանումը	Բնույթը /տպ., ձեռ./	Հրատարակչութ.,ամսագիր, հեղինակային իրավունք /տարին, համարը/	Ծավալը /էջ/	Համա հեղի նակներ
1	2	3	4	5	6
35.	Բոլշևիկների օգնությունը քեմալականներին 1920թ.	-	«Դրոշակ», Երևան, 2000, թիվ 1	154-164	
36.	Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ /1920թ./	-	«Դրոշակ», Երևան, 2001, թիվ 2	էջ 135-161	
37.	Քննադատություն և մատենախոսություն՝ Ա. Մ. Հակոբյանի «Կարսի մարզ /գյուղացիության պատմության ուրվագծեր/ 1878-1917թթ.» աշխատության մասին	-	Լրաբեր հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ, 2001, թիվ 1	էջ 256-258	Վ. Խ. Հովակիմյան
38.	Հայկական հարցը Ազգերի լիգայում 1920թ.	-	«Դրոշակ», Երևան, 2001, թիվ 4	էջ 77-95	
39.	Հայաստանի մանդատի խնդիրը և ԱՄՆ-ը /1918-1920թթ./	-	«Դրոշակ», Երևան, 2002, թիվ 1	էջ 52-67	
40.	Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը	-	«Լրաբեր» հասարակական գիտությունների ՀՀ ԳԱԱ, Ե., 2002, թիվ 2	էջ 106-111	
41.	Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914թթ./	-	«Եգերս» հրատարակչություն, Ե., 2003	200	Ա. Կարապետյան Գ. Հովհաննիսյան Գ. Խուդինյան և ուրիշներ
42.	Թե ինչպես Անին չմիացվեց Հայաստանին /1921թ./	-	«Պատմա-Բանասիրական հանդես», ՀՀ ԳԱԱ, Ե., 2003, թիվ 2	73-83	
43.	ԵՐՊԻ-ՀՊՃՀ 1933-2003	-	ՀՊՃՀ տպարան, Ե., 2003	134	Ա. Սարգսյան
44.	Հայոց պատմություն /ուսումնական ձեռնարկ/ լրամշակված վերահրատարակություն	-	«Ճարտարագետ», Ե., 2004	351	Ա. Սարգսյան
45.	1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը	-	«Դրոշակ», 2004, թիվ 3 /հուլիս/	էջ 51-69	
46.	Հայկական պառլամենտարիզմը և կուսակցությունները	-	«Ազգային ժողով», Ե., 2004, թիվ 1	էջ 60-62	
47.	1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը /ուսումնամեթոդական ձեռնարկ/	-	«Ճարտարագետ» հրատ., Ե., 2004	26	
48.	Հայաստանի առաջին Հանրապետության երկու գումարման խորհրդարան	-	«Ազգային ժողով», Ե., 2004, թիվ 2	էջ 56-58	
49.	Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի աշխատակարգը	-	«Ազգային ժողով», Ե., 2004, թիվ 4	էջ 57-58	
50.	Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» մենագրության մասին գրախոսություն	-	«Պատմա-բանասիրական հանդես», Ե., 2004, թիվ 3	էջ 270-275	Հ. Հարությունյան

51.	ՀՅԴ պատմության խեղաթյուրման վերջին փորձերը	տպագիր	«Լուսակն» հրատարակչություն, Ե., 2005	60	Գ. Խուդինյան
52.	Հայ ժողովրդի քաղաքական պատմություն /մեթոդական ուղեցույց	-	«Ճարտարագետ» հրատարակչ., Ե., 2005	32	Կ. Թառոյան Վ. Վիրաբյան
53.	ՀՀ Պարբերական մամուլի պատմություն /1918-1920թթ./	-	Հեղ. հրատ., Ե., 2005	64	
54.	Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները /1918-1920թթ./	-	ՀՅԴ հրատ., Ե., 2005	364	
55.	Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.), գրախոսություն, հեղ. Ա. Վիրաբյան	-	ՊԲՀ, Ե., 2006, թիվ 1	325-327	
56.	ՀՀ դիվանագիտական կապերը (1918–1920 թթ.)	-	ՀՊՏՀ 21-րդ գիտ. նստաշրջանի նյութեր (II), տնտես հրատ., Ե., 2007	71-75	
57	Դասախոսության տեքստերի ժողովածու (2-րդ պրակ)	-	«Տնտեսագետ» հրատ., Ե., 2006	116	Լ. Մանուկյան Ս.Ստեփանյան Հ. Դարբինյան Գ. Այվազյան
58	Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ	-	«Պատմա-Բանասիրական հանդես», ՀՀ ԳԱԱ, 2006, թիվ 3	36-56	
59	Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920-1921 թթ.)	-	«Լրաբեր հասարակական գիտ.», Ե., 2007, թիվ 2	17-30	
60.	ՀՀ անկախության ուղին (անկախության 90-ամյակի առթիվ)	-	ՊԲՀ, Ե., 2008 , թիվ 1	20-33	
61.	Հայաստանի առաջին Հանրապետության պետհրավական կառուցվածքը (1918-1920 թթ.)	-	1918 թ. մայիսյան հերոսամարտերի 90-ամյակի գիտաժողովի նյութեր, Ե., 2008	8	
62.	Հ.Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.» մենագրության գրախոսություն	-	ՊԲՀ, Ե., 2008, թիվ 2	4	
63.	Ծրագիր «Հայոց պատմություն» առարկայի (բակալավրական կրթության համար)	-	«Տնտեսագետ» հրատ., Ե., 2009 թ.	1,7 մամ	Գ. Այվազյան
64.	Միացյալ Հայաստանի անկախության ակտը (ընդունման 90-ամյակի առթիվ)	-	«Վեմ», թիվ 1(26), ապրիլ-հունիս 2009 թ.	107-112	
65.	Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ	-	«Դրոշակ», մայիս, թիվ 5, Ե., 2009 թ.	43-47	
66.	ՀՅԴ-ՌԿ(բ)Կ Ռիգայի 1921 թ. բանակցությունների հարցի շուրջ	-	«Դրոշակ», թիվ 03 (1618), Ե., 2010 թ.	31-37	
67.	Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման	-	«Դրոշակ», թիվ 05 (1620), Ե., 2010 թ.	25-29	

	միջազգային իրավական հիմքերը				
68.	Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և կարսի պայմանագրերում	-	ՀՀ ԳԱԱ, «Գիտություն » Հրատ., Ե., 2010 թ.	18 մամ.	
69.	ՀՅԴ պետական գործունեությունը 1918-1920 թթ.	-	«Դոշակ», թիվ 11 (1626), Ե., 2010 թ.	8-13	
70.	Արարատ Հակոբյանի Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում(գրախոսություն Կարապետյան Մ.),	-	«Պատմաբանասիրական հանդես», Ե., 2010, թիվ 3(185)	265-269	